ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-27/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստ

ք.Երևան
19 նոյեմբերի 2026

ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Տիրան Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Տաթևիկ Պալոյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Նելլի Աբովյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-27/10» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի հրավերի և հայտարարության տեքստը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահ Տ.Խաչատրյանը նիստը հայտարարեց բացված և հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից 18.11.26թ-ին ներկայացված գնման հայտը և ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության գլխավոր քարտուղար Տ. Իգիթյանի 18.11.26թ.-ի «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-27/10», ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով ստեղծելու մասին թիվ 2225-Ա հրամանը, ներկայացրեց ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության կարիքների համար «գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի» գնման հայտարարության և հրավերի տեքստերը, գնման ընթացակարգի հետ կապված ամբողջ փաթեթը: Հանձնաժողովը ուսումնասիրեց և որոշեց՝

1. -հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստերը,
2. -հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հետադարձ աճուրդի ավարտից հետո, նույն օրվա ընթացքում, ք.Երևան, Արշակունյաց պ 63:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0
Հանձնաժողովի

Նախագահ՝_____ Տ. Խաչատրյան

Քարտուղար՝_____ Ն. Աբովյան

Հանձնաժողովի անդամներ՝

1. _____ Հ. Հովհաննիսյան

2. _____ Տ. Պալոյան